Ս. ՊԱՏԱՐԱԳ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Մայիսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հոգեգալստյան տոնի և Հայաստանի առաջին հանրապետության ոգեկոչման առիթով մատուցվեց հանդիսավոր պատարագ՝ ձեռամբ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոլատյանի:

Պատարագիչ սրբազան հայրն իր քարոզում անդրադարձավ օրվա տոնի խորհրդին, ինչպես նաև 1918 թ. մայիսի 28-ին հռչակված Հայաստանի առաջին հանրապետության, Սարդարապատի հերոսական ճակատամարտի պատմական դերին ու նշանակությանը:

Սարդարապատի հերոսամարտի կոհերի և հանուն Հայաստանի անկախության նահատակվածների համար կատարվեց հոգեգալստյան պաշտոն՝ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի: Ս. Պատարագի ավարտին՝ Հայաստանի անկախ հանրապետության կորացման ու ամրապնդման համար մատուցվեց գոհաբանական աղոթք:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(Կիրակի, 26 Մայիսի 1996)

"Ծանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն":

"Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ վերնատուն, որով նորոգեցան դասք առաքելոցն" (Շարական) :

Սրբազան շարականագիրը Սուրբ Հոգու գալստյան տոնի առթիվ գրել է վերոհիշյալ տողերը, ասելով. "Այսօր երկնայիններն ուրախացան երկրավորներիս նորոգությամբ, քանզի էությունը նորոգող Հոգին իջավ վերնատուն, որով նորոգվեցին առաքյալների խմբերը":

Այսօր Հոգեգալուստ է՝ Պենտեկոստե: Մեր Տիրոջ և Փրկչի Հարությունից հետո, ահավասիկ, անցան հիսուն օրեր: Քրիստոս Իր հրաշափառ Հարությամբ վերանորոգեց առաքյալների և բոլոր հետևորդների վստահությունը, Իր Հարու-

թյամբ երկնային թագավորության մասին նրանց ունեցած կասկածը փարատեց և այդպիսով հանուր մարդկության առջև բացեց հավիտենական երանական կյանքի դռները: Մենք՝ մահկանացուներս, հավանաբար ենթադրում էինք, որ մահը սահման է և վախճան և մահվամբ է ավարտվում ամեն բան մեր կյանքում: Հիսուս եկավ ապացուցելու, որ մահվամբ է պարտվում մահը և մահվամբ մի նոր՝ հոգևոր կյանք է սկզբնավորվում: Իր փառավոր հարությունից հետո Հիսուս քառասուն օր շարունակ աշակերտների հետ եղավ, որպեսզի նրանց սրտում բուն դրած կասկածը առհավետ փարատվեր, նրանց կասկածը՝ որ Հիսուս խաչի վրա մահացավ և նրա տված երկնային թագավորության հույսը ու հավատը այդպիսով անհետացավ, փարատվեց:

Հիսուս վերահաստատեց իր աշակերտների՝ իրեն հանդեպ ունեցած, խախտված հավատը և Աստծու արքայության մասին նրանց ունեցած նյութական հասկացողությունը վերափոխեց հոգևոր իմաստի և հասկացողության՝ բացելով նրանց հոգու աչքերը:

Նա քառասուն օր շարունակ քարոզեց իր աշակերտներին, ճաշեց նրանց հետ, ձկնորսության մասնակցեց և երբ հասավ որոշված ժամը, նրանց հետ բարձրացավ այն սարը, որ հետագային կոչվեց Համբարձման լեռ, ուր իր վերջին պատվիրաններն ու պատգամը տվեց նրանց և ապա հանկարծակի երկինք համբարձեց: Ապշած աշակերտները երկնքում իրենց վարդապետի հետքերն էին փնտրում, երբ այդ պահին երկու հրեշտակներ հայտնվեցին և նրանց ասացին, թե Հիսուս՝ իրենց վարդապետը, համբարձվեց երկինք, գնաց իր Հոր՝ Աստծու աջ կողմում բազմելու:

Հիսուս իր համբարձումից առաջ աշակերտներին պատվիրեց ասելով. "Մնացեք Երուսաղեմ քաղաքում մինչև երկնքից ստացումը Սուրբ Հոգու զորության": Նա նաև պատվիրեց նրանց, որ բոլորով լինեն միասնական, միակամ և համախոհ: Եվ չուշացավ հոգեգալստյան սրբազան պահը: Պենտեկոստեի առավոտյան Երուսաղեմ քաղաքում հանկարծ սաստիկ փոթորկի և հողմի ձայն լսվեց: Մարդիկ լսելով այդ սաստիկ ձայնը զարմացան, թե ի՞նչ պատահեց, և փութացին գնալ դեպի այն վայրը, ուր ենթադրում էին, որ փոթորիկը կարող էր ավեր գործած լինել:

Մինչ վերնատանը հավաքված աշակերտները միակամ և միախորհուրդ, աղոթքով, սաղմոսների երգասացությամբ սպասում էին խոստացյալ Սուրբ Հոգուն, սաստիկ հողմի ահեղ ձայնից հետո երկնքից նրանց վրա իջավ աստվածային, շնորհաշատ Սուրբ Հոգին՝ հրեղեն լեզուների կերպարանքով, և յուրաքանչյուրին՝ այդ Գալիլիացի պարզ ձկնորսներին տարբեր լեզուներով խոսելու, բարբառելու շնորհով օժտեց: Հրաշալի և անկրկնելի մի հրաշք, աստվածային ինչպիսի հայտնություն:

Այդ օրերին Երուսաղեմ էին եկել շատ մարդիկ ոչ միայն Հրեաստանից, այլ նաև Միջերկրականի ավազանի շուրջ գտնվող բոլոր երկրներից: Այս առթիվ Տերտուղիանոս Հայրապետը ասում է, որ Երուսաղեմ էին եկել նաև մարդիկ Հայաստանից: Երուսաղեմում հյուրաբար գտնվող օտարները ապշեցին՝ լսելով իրենց երկրի հատուկ լեզուները, որոնցով խոսում էին Գալիլիացի այս նախկին ձկնորսները:

Հրաշքը Աստվածային հոգեգալստյան արդեն կատարվել էր, աշակերտների իմացականության մեջ ծագել էր շնորհի լույսը, որն ստանալու համար նրանք

սպասում էին օրեր շարունակ: Հենց այս շնորհի մասին Հիսուսի ծնունդից հինգ կամ չորս դար առաջ Հովել մարգարեն ասել էր, որ Աստծու Հոգին հեղվելու է ձեր և ձեր զավակների վրա և նրանք խոսելու են տարբեր լեզուներով, մարգարեանալու են, տեսիլներ և երազներ են տեսնելու և Աստծու շնորհով են զարդարվելու:

Վերնատան առաջ հավաքված ամբոխը զարմացած էր, նրանցից ոմանք ասում էին, թե առաքյալները հարբած են քաղցր գինիով: Պետրոս առաքյալը, փարատելու համար այդ սխալ կարծիքը, մոտեցավ ժողովրդին և բացատրեց նրանց Հովել մարգարեի խոսքերը, թե դրանք ի՞նչ էին նշանակում, և թե Հիսուս իր համբարձումից առաջ խոստացել էր մխիթարիչ Սուրբ Հոգին ուղարկել առաքյալներին և աշակերտներին՝ տալու համար նրանց անսպառ շնորհը աստվածային: Նա նաև շեշտում է հրեից կողմից խաչված Հիսուսի Աստվածորդի և աշխարհի Փրկիչ լինելու հանգամանքը և հրավիրում բոլոր ներկաներին ընդունելու Քրիստոսը: Գործք Առաքելոցը այս մասին հայտնում է, որ այդ օրը դարձի եկողների թիվը երեք հազարից ավելի եղավ:

Սիրելի հավատացյալներ, հոգեգալստյան հոգեպարար տոնի առիթով, օրվա հիմնական պատգամը առաքյալներին տրված նրանց միակամ, համախոհ և միասնական լինելն էր, որը պատվիրվել էր նրանց ի վերուստ: Նրանք վերնատանը միասնական եղբայրական սիրով կապված, ամեն օր աղոթում էին, սաղմոսերգում և սուրբ հաղորդության խորհրդի կատարումով իրենք իրենց զորացնում ու պատրաստում՝ ստացմանը համար Սուրբ Հոգու շնորհներին: Նրանց ունեցած միությունն ու միասնականությունը օրինակելի է նաև այսօր մեզ համար, դա ազգերի և ժողովուրդների գոյատևման առհավատչյան է, այսօր և հավիտյան: Առանց այդ միասնականության որքան ազգեր պատմության թատերաբեմից առհավետ կորչել են:

Այս մասին ուզում եմ մեր ժողովրդի պատմությունից բերել մի օրինակ, որը վերաբերվում է Բագրատունյաց իշխանության շրջանին: Երբ 11-րդ դարում Բագրատունյաց մայրաքաղաք Անիի իշխանությունը քայքայվեց, իշխաններն ու ազնվականները իրենց ընտանիքներով և պարագաներով և մեծ խմբերով, առնելով իրենց շարժական ստացվածքը, գաղթեցին դեպի արևմուտք, այսօրվա հասկացողությամբ դեպի արևելյան Եվրոպայի երկրներ: Նրանք դարերի ընթացքում հերոսական մաքառումներով պայքարեցին ոսոխի դեմ, եկեղեցիներ, վանքեր հիմնեցին, իրենց գոյությունը փորձեցին այնտեղ հավերժացնել, հաճախ նրանց անունները փառաբանվեցին իբրև դիվանագետների, կարգապահ զինվորականների և հերոսների, բայց որովհետև նրանք իրենց մայրենի հողի վրա չէին ապրում, իսպառ մոռացվելու ենթակա եղան և այսօր նրանց մասին շատ քիչ բան ենք իմանում:

Մինչդեռ Հայրենի հողի վրա մնացած և ամրորեն հաստատված ժողովուրդը կարողացավ համախմբվել և իր եկեղեցիով զորանալ ու աճել, հակառակ հայրենի հողի վրա իրենց ունեցած շատ դառը ճակատագրին, հակառակ իշխող ցեղերի և ազգերի կեղեքման և հալածանքի քաղաքականության, նրանք կարողացան ազատագրական պայքարի դրոշ բարձրացնել 17-րդ դարից սկսած, Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի, Իսրայել Օրիի և Ղարաբաղի մելիքների օրերին և այդ ազատագրական պայքարը իր պտուղները տվեց ժամանակի ընթացքում:

Հայ ժողովուրդը չուրջ ինը երկար դարեր իր Հայրենի պատմական հողերի վրա կորցրեց իր անկախությունը և զրկվեց ունենալուց իր պետականությունը:

Այսօր Մայիս 26 է, Հոգեգալստյան տոնի այս շնորհաբեր օրը նաև Սարդարապատի ճակատամարտի հիշատակի 78-րդ տարեդարձի օրն է: Օր վերհիշումի, անցյալի պատմության հետ հաղորդության, պատմությունից դասեր ուսանելու և փառավոր հաղթանակի և կամքի տոնախմբության:

Երբ 1915 թվականի Ապրիլին ահավոր եղեռն էր արևմտահայության դեմ ի կատար ածվում և այդ տարիներին ավելի քան մեկուկես միլիոն հայեր զոհ էին դառնում այդ եղեռնին, հայության մազապուրծ կերպով ազատված մնացորդացը այդ ցեղասպանությունից, եկել ու կայք էր դրել Արևելյան Հայաստանում: Երբ արդեն մարդիկ ենթադրում էին, որ հայ ժողովուրդը պատմության թատերաբեմից իսպառ կվերանա և հուշ կդառնա: Հենց այդ տարիներին Թրքական բանակները իրենց զենքը դարձրին դեպի Արևելյան Հայաստան, ամբողջովին բնաջնջելու համար ողջ արևելահայությունը ևս: Անցյալի դառն փորձությունից դաս առած և սթափված, մեր ժողովուրդը համախմբվեց, միության ոգին զորացավ նրա մեջ, ինչպես առաքյալներն էին համախոհ և միասնական, մեր ժողովուրդը նույնպես թշնամու դիմաց բռունցք դարձավ և կարողացավ զգեստել նրան Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի մարտերում և կարողացավ իր պատմության ամենադառն մեկ պահին ստեղծել ու կերտել իր անկախությունը:

Այսօր Սարդարապատի և մյուս հերոսամարտերի տարեդարձն է: Ձեն մոռացվում նրանք, որոնք վասն Հայրենյաց նահատակվեցին, խունկ ու աղոթք նրանց հիշատակին: Փառք նրանց, ովքեր իրենց քաջությամբ հերոսաբար մարտնչեցին ոսոխի դեմ և Հայրենյաց փառքի դափնին հյուսեցին և դրանով ապահովեցին ներկա մեր Հայրենիքի հավիտենական երթը և անկախությունը: Փառք Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսներին:

Սուրբ Հոգու շնորհների ստացման այս ցնծալի օրը մեր ազգի բոլոր զավակների համար թող լինի հոգևոր վերածնդյան օր: Բարիք տարածենք աշխարհով մեկ, սիրենք մեր ազգն ու Եկեղեցին և Հայրենիքի փառքի համար միշտ պատրաստ լինենք զոհողություն հանձն առնել:

Այս պահին եռամեծ վարդապետ, աստվածատես վանական և անկրկնելի շնորհով աստվածային փառքի երգիչ Սուրբ Գրիգոր Նարեկացու Ս. Հոգուն նվիրված այս տողերով ուզում եմ իմ խոսքը ավարտել. "Աղաչում եմ մեծ, անփոփոխելի ու ամենազոր տերության Հոգուդ, առաքիր, զթած, ցողդ քաղցրության, ներաղդիր հոգուս և զգայության տիրակալ մտքիս, օժտիր բաղմաձիր, առատապարգև ու ամենալիր Քո շնորհներով: Հերկիր բանական անդաստանները իմ այս մարմնեղեն կարծրացած սրտի, որ կարող լինի պտղաբերելու սերմդ հոգևոր». ամեն: